ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N2

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ՀՀՄՆ-ՊԸԾՁԲ-17/41» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «22» 12 2017 թ.

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը (այսուհետև՝ Պատվիրատու), ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող աշխատակազմի ղեկավար Ս. Մուրադյանի, մի կողմից, և «Վանարխ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Ղուկասյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից (երկուսը միասին այսուհետ «Կողմեր») կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1. Հիմք ընդունելով կողմերի միջև 2017 թվականի մայիսի 15-ին կնքված պետության կարիքների համար տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պետական գնման **N «ՀՀՄՆ-ՊԸԾՁԲ-17/41»** պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.3 կետը և առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թ. դեկտեմբերի 14-ի «Թույլտվություն տալու մասին» N 1596-Ա որոշմամբ՝ Պատվիրատուն և Կատարողը համաձայնության են եկել Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1.1 Պայմանագրի 4.1 կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4.1.1 ենթակետով.

«4.1.1 Պայմանագրի գնից՝ **1 841 900** (մեկ միլիոն ութ հարյուր քառասունմեկ հազար ինը հարյուր) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ բանկային հաշվին՝ որպես կանխավճար, ընդ որում՝

1-ին չափաբաժնի մասով՝ 501 600 (հինգ հարյուր մեկ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ:

5-րդ չափաբաժնի մասով՝ 358 800 (երեք հարյուր հիսունութ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ:

6-րդ չափաբաժնի մասով՝ 77 000 (յոթանասունյոթ հազար) ՀՀ դրամ:

7-րդ չափաբաժնի մասով՝ 193 800 (մեկ հարյուր իննսուներեք հազար ութ հարյուր) ՀՀ դրամ:

8-րդ չափաբաժնի մասով՝ 532 500 (հինգ հարյուր երեսուներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

13-րդ չափաբաժնի մասով՝ 178 200 (մեկ հարյուր յոթանասունութ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:»:

1.1.2 Պայմանագրի N 1 «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» հավելվածում ծառայության մատուցման ժամկետի ավարտը՝ **«15.12.2017թ.»** բառերը փոխարինել **«30.06.2018 թ.»** բառերով:

1.1.3 Պայմանագրի N 2 «Վճարման ժամանակացույց» հավելվածը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Համաձայնագրի գործողության ժամկետը

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրվելու պահից և

գործում է մինչև Պայմանագրով սահմանված երկու Կողմերի պարտավորությունները լրիվ ծավալով ու պատշաճ կատարելու ավարտի ժամկետը:

2.2. Կողմերի միջև ձեռք բերված՝ սույն համաձայնագրին հակասող բոլոր նախկին պայմանավորվածությունները դադարում են գործել սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությանը համապատասխան:

3.3. Սույն համաձայնագիրը և հավելվածները կազմված են 3(երեք) էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի N 2 հավելվածը համարվում է համաձայնագրի անբաժանելի մասը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ մշակույթի նախարարություն Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական շենք N 2, հեռ.՝ (011) 58-51-78 ՀՎՀՀ 02508054, ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գանձապետական վարչությունում Աշխատակազմի ղեկավար **Ս. Մուրադյան** (ստորագրություն) Կ.Տ	«Վանարխ» ՍՊԸ Հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր , Տաթևի 14 հեռ.՝ 094757505 էլ. հասցեն՝ vanarkh@mail.ru ՀՎՀՀ 06931375, հ/հ 2050222082221001 «Ինեկոբանկ» ՓԲԸ, Վանաձոր մասնաճյուղ Տնօրեն՝ **Ա. Ղուկասյան** (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված

« 22» 12.2017թ. կնքված

N 2 համաձայնագրի

Հավելված 2

« 15 » մայիսի 2017թ. կնքված

N «ՀՀՄՆ-ՊԸԾՁԲ-17/41» ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Աշխատանքների անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017 և 2018 թվականներին՝ ըստ ամիսների՝ այդ թվում													
		2017թ.						2018թ.							
		հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	**Ընդամենը**
1	ՀՀ Արագածոտնի մարզի Իրինդ համայնքի Սբ Աստվածածին եկեղեցու ամրակայման և վերականգնման 2017 թ. կատարվելիք աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ	722 000	722 000	722 000	722 000	722 000	722 000	722 000	722 000	722 000	722 000	722 000	760 000	760 000	**760 000**
2	ՀՀ Արագածոտնի մարզի Բյուրական համայնքի Արտավազիկ եկեղեցու 2017 թ. կատարվելիք ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ	200 000	200 000	200 000	**500 000**	**500 000**	**500 000**								
3	ՀՀ Արարատի մարզի Արտաշատ քաղաքատեղիի բաղնիքի խճանկարների ամրակայման, նորոգման և վերականգնման 2017 թ. կատարվելիք աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ	65 406	65 406	65 406	**220 000**	**220 000**	**220 000**								
5	ՀՀ Արմավիրի մարզի Այգեշատ համայնքի Թարգմանչաց եկեղեցու 2017 թ. կատարվելիք ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ	295 360	295 360	295 360	494 000	494 000	494 000	494 000	494 000	494 000	494 000	494 000	520 000	520 000	**520 000**
6	ՀՀ Արմավիրի մարզի Տարոնիկ համայնքի Մեծամորի սրբարանների ամրակայման, նորոգման և վերականգնման 2017 թ. կատարվելիք աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ	69 960	69 960	69 960	209 000	209 000	209 000	209 000	209 000	209 000	209 000	209 000	220 000	220 000	**220 000**
7	ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի Քոբայրավանքի սեղանատան ամրակայման, նորոգման և վերականգնման 2017թ. կատարվելիք աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ	323 760	323 760	323 760	541 500	541 500	541 500	541 500	541 500	541 500	541 500	541 500	570 000	570 000	**570 000**

8	ՀՀ Լոռու մարզի Ալավերդի քաղաքային համայնքի Սանահինի վանքի Սբ Ամենափրկիչ եկեղեցու ամրակայման, նորոգման և վերականգնման 2017 թ. կատարվելիք աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ	403 280	403 280	403 280	674 500	674 500	674 500	674 500	674 500	674 500	674 500	674 500	710 000	710 000	**710 000**
10	ՀՀ Սյունիքի մարզի Վաղատնի համայնքի Որոտնավանքի (գավթի) ամրակայման, նորոգման և վերականգնման 2017 թ. կատարվելիք աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ	22 661	22 661	22 661	**170 000**	**170 000**	**170 000**								
11	ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի Սբ Գևորգ եկեղեցու, գավթի ամրակայման, նորոգման և վերականգնման 2017 թ. կատարվելիք աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ	239 400	239 400	239 400	**570000**	**570000**	**570000**								
12	ՀՀ Տավուշի մարզի Գոշ համայնքի Մխիթար Գոշի դամբարանի ամրակայման, նորոգման և վերականգնման 2017 թ. կատարվելիք աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ	45 440	45 440	45 400	**80 000**	**80 000**	**80 000**								
13	ՀՀ Տավուշի մարզի Գոշ համայնքի Գոշավանքի Սբ Աստվածածին եկեղեցու ամրակայման, նորոգման և վերականգնման 2017 թ. կատարվելիք աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ	374 880	374 880	374 880	627 000	627 000	627 000	627 000	627 000	627 000	627 000	627 000	660 000	660 000	**660 000**

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,
Կառավարական շենք N 2,
հեռ.՝ (011) 58-51-78
ՀՎՀՀ 02508054,
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում

Աշխատակազմի ղեկավար

______________ Մ. Մուրադյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Վանարխ» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Տաթևի 14
հեռ.՝ 094757505, էլ. հասցեն՝ vanarkh@mail.ru
ՀՎՀՀ 06931375,
հ/հ 2050222082221001
«Ինեկոբանկ» ՓԲԸ, Վանաձոր մասնաճյուղ

Տնօրեն՝

______________ Ա. Ղուկասյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Պատվիրատուն՝ ՀՀ մշակույթի նախարարությունը, ստորև ներկայացնում է իր կարիքների համար պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված **ՀՀՄՆ-ՊԸԾՁԲ-17/41** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2017 թվականի մայիսի 5-ին կնքված N **«ՀՀՄՆ-ՊԸԾՁԲ-17/41»** ծածկագրով պայմանագրում **2017 թվականի դեկտեմբերի 22-ին** կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1: ՀՀ կառավարության 2017 թ. դեկտեմբերի 14-ի «Թույլտվություն տալու մասին» N 1596-Ա որոշմամբ թույլատրվել է ՀՀ մշակույթի նախարարության կարիքների համար պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքների 2017 թվականին կնքված պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման, այդ աշխատանքների որակի տեխնիկական հսկողության և հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման պայմանագրերում կատարել փոփոխություններ՝ դրանցով նախատեսված աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման վերջնաժամկետը երկարաձգելով մինչև 2018 թվականի հուլիսի 1-ը :

Փոփոխության նկարագրություն N 1: Պայմանագրի N 1 «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» հավելվածում ծառայությունների մատուցման ժամկետի երկարաձգում մինչև 2018 թ-ի հունիսի 30-ը:

Փոփոխության հիմնավորում N 1: ՀՀ կառավարության 2017 թ. դեկտեմբերի 14-ի «Թույլտվություն տալու մասին» N 1596-Ա որոշում: Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 57-րդ կետ:

Փոփոխության առաջացման պատճառ N 2: Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ժամկետի երկարաձգմամբ պայմանավորված՝ Պայմանագրով նախատեսված և 2018թ. կատարվելիք ծառայությունների մատուցման գնի մինչև 95 տոկոսի չափով կանխավճարի տրամադրում:

Փոփոխության նկարագրություն N 2: Պայմանագրով նախատեսված և 2018թ. կատարվելիք ծառայությունների մատուցման գնի 95 տոկոսի չափով կանխավճարի տրամադրում:

Փոփոխության հիմնավորում N 2: ՀՀ կառավարության 2017 թ. դեկտեմբերի 14-ի «Թույլտվություն տալու մասին» N 1596-Ա որոշում: Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 57-րդ կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ն. Կարապետյանին:

Հեռախոս՝ 011 58-51-78:

Էլ. փոստ՝ cultproject@mail.ru:

Պատվիրատու՝ ՀՀ մշակույթի նախարարություն

ՎԱՆԱՁՈՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
INECOBANK

22.12.2017թ. № G3565

ԵՐԱՇԽԻՔ N EA17/00156

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ մշակույթի նախարարության և <<ՎԱՆԱՐԽ>> ՍՊԸ (այսուհետ՝ պրինցիպալ) միջև Կնքվելիք

N ՀՀՄՆ-ՊԸԾՁԲ-17/41 ծածկագրով պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

Բենեֆիցիարը հանդիսանում է Ֆինանսների նախարարությունը:

2. Երաշխիքով <<Ինեկոբանկ>> ՓԲԸ <<ՎԱՆԱՁՈՐ>> մասնաճյուղը (ՀՀ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 75) (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 1,841,900.00 (մեկ միլիոն ութ հարյուր քառասունմեկ հազար ինը հարյուր) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի <<Ինեկոբանկ>> ՓԲԸ բանկում բացված 2050222082221001 բանկային հաշվին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է 21.12.2017թ.-ից մինչև 30.06.2018թ.-ը ներառյալ:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Այն դեպքում, երբ բենեֆիցիարը ներկայացրել է սույն երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ և կից փաստաթղթեր, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում երաշխիքի գումարն ամբողջությամբ, ապա բենեֆիցիարն իրավունք ունի երաշխիք տվող անձի բանկից պահանջելու երաշխիք տվող անձի հաշվից իրեն վճարել երաշխիքի գումարը՝ ներկայացնելով սույն երաշխիքի իր օրինակը:

9. Այն դեպքում, երբ բենեֆիցիարը ներկայացրել է սույն երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ և կից փաստաթղթեր, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում երաշխիքի գումարն ամբողջությամբ, այդ թվում՝ երբ բենեֆիցիարի կողմից սույն երաշխիքի 8-րդ կետում ամրագրված իր իրավունքից օգտվելու դեպքում՝ երաշխիք տվող անձի բանկային հաշվում առկա չեն բավարար միջոցներ, ապա երաշխիք տվող անձը, իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար բենեֆիցիարին վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար՝ 0.1 տոկոսի չափով: Ընդ որում, երաշխիքի գումարի վճարման իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար երաշխիք տվող անձի պատասխանատվությունը չի սահմանափակվում երաշխիքի գումարով:

10. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

11. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

12. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

13. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

<<ԻՆԵԿՈԲԱՆԿ>> ՓԲԸ <<ՎԱՆԱՁՈՐ>> մասնաճյուղ

ՀՀ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 75

Կառավարիչ _____ **Վ. Հակոբջանյան**

ԻՆԵԿՈԲԱՆԿ ՓԲԸ, 2001, ք. Վանաձոր, Տիգրան Մեծ փ. 75, **Հեռ.՝** +(374 322) 4 09 21, 4 09 24
Էլ. փոստ՝ inecobank@inecobank.am, **www.inecobank.am**